

**Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք**

Պ Ե Ս Ա Ր Ա Պ Ի Ո Յ Տ Ո Ւ Կ Կ Ե Ր Ը.

Մարախին պէս ցորենի ու ամէն տեսակ բերքի վնասակար կինդանիներէն մէկն ալ մուկն է, որ տեղ տեղ ու ատեն ատեն ահագին բազմութեամբ դաշտերը՝ գեղերը քաղաքները կլըցուի ու մեծամեծ վնասներ կընէ. ինչպէս որ յայտնի է նաեւ սուրբ Գրոց պատմութենէն եւ դրսի իին եւ նոր պատմութիւններէն: — Այս տարի այն սոսկակի հարուածին տակն է Պեսարապիոյ նահանգին մէկ մասը, յորում այնքան շատցեր են մկներն որ ոչ միայն բուսած ցորենները կերեր լինցուցեր են, իսպա նաեւ ժողվուած ու շտե-

մարաններու մէջ պահուածները: Գեղացւոց տըներուն մէջ ալ խիստ մեծ անհանգստութիւն կուտան, վասն զի ամէն տեղ ու ամէն բանի մէջ կվըխտան: — Այս մկանց կարգէ դուրս բազմանալը կպատահի երեմն նաեւ Հայաստանի բանի մը գաւառները: Գեղացիք սովորութիւն ըրած են որ այնպիսի ժամանակ կերթան Մխիթարաց Գօշի գերեզմանէն հող կառնուն բարի հաւատքով, կբերեն իրենց արտերուն ցորեններուն մէջ կցանեն. իսկոյն մկները կիալածին, ինչպէս որ պատմեցին մեզի արժանահաւատ անձինք:

ԵՒՐՈՊԱՑԻՈՑ ԱՅՃՄՈՒ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Հաշիւ կընեն որ միայն Գաղղիոյ մէջ տարին 780 հազար ճամբորդութիւն կլինի երկաթուղիներու վրայ, եւ բոլորը մէկէն՝ 70 միլիոն վերսթ տեղ կիամրուի այն ճամբորդութեանց կտրածը: Տասը տարուան միջոցին, այսինքն 1850-էն մինչեւ 1860, երկաթուղիներու վրայ ճամբորդութիւն ընողներուն թիւը 310 միլիոն եղեր է, եւ ասոնցմէ

զանազան դիպուածներով 44 հոգի միայն մեռեր է, որ ըսել է՝ 7 միլիոնին 1 հոգի. որով կիմացուի թէ ո՞րքան աւելի են այն փորձանքներն որ ծիով ու կառքով քալողներուն կպատահին: Օրինակի համար, միայն Փարիզու մէջ 1860-ին 920 փորձանք պատահեր է կառքով քալողներուն, յորոց 30-ը մեռեր են, եւ 579 վիրաւորուեր են:

**ՀՅԱՆԵԼՈՒԿ.**

Դըլուխ մ' ունի՝ գըլուխ չէ,  
 Սուր ոտք ունի՝ քալող չէ,  
 Ուղեղ չունի  
 Հոգի չունի,  
 Կողի, կարծես թէ ողջ է:

**Տարւոյս Օրացուցին Նոյեմբերի հանելուկներն են, առաջինը Գլուխ. — Երկրորդը ԳԱՄ. — Երրորդը ԺԱՄԱՅՈՅՑ:**

Հրամայեցաք տպագրիւ. իթեղոսիա, ի 18 Նոյեմբերի 1861. Գարրիէլ Վ. Այվազեան.

Ինպարանի Խալիպեան Ռևումնարանի Հայոց: